ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ.ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ N 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ստեղծագործականության զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում

Մասնակից՝ Ազատուհի Կարապետյան

Դպրոց՝ Առատաշենի Գ. Գրիգորյանի անվան միջն. դպրոց

Վերապատրաստող՝ Կարինե Ավետիսյան

Վաղարշապատ 2022թ.

Բովանդակություն

1.Նախաբան
2.Գրականության ակնարկ խնդրի վերլուծություն
3.Հետազոտական
համատեքստ
4.Գործնական համատեքստ
5 Հետազոտության ընթացք ,տվյալների մշակում
6.Եզրակացություն
7.Գրականություն

Նախաբան

Բոլոր մարդիկ գործունեության այս կամ այ ոլորտում ունակ են գրանցելու ստեղծագործական նվաճումներ՝ ճիշտ պայմանների, ինչպես նաև համապատասխան գիտելիքների և հմտությունների առկայության պարագայում:

Քեն Ռոբինսոն

Կրթության ոլորտը դիտարկվում է որպես երկրի կայուն զարգացման,նաև մարդկային ռեսուրսի պահպանման և վերարտադրման նախապայմաններից:Անվիճելի է այն փաստը, որ ստեղծագործական ունակություններով օժտված է յուրաքանչյուր անձ: Անհրաժեշտ է միայն հայտնաբերել այդ ունակությունները և ձևավորել անկրկնելի ունակություններով ստեղծագործող անհատականություն: Պետք չէ անձի ստեղծագործական ունակություն ասելով հասկանալ գեղագիտական, էսթետիկական ուղղությունը: Ստեղծագործությունը առկա է յուրաքանչյուր աշխատանքում, պետք է միայն շարժել երևակայություն:

Ստեղծագործական ընդունակությունների զարգացման խնդիրը միշտ եղել է և կա արդիական խնդիր, որովհետև ստեղծագործող անհատները միշտ էլ պահանջարկ են վայելում և նրանք են որոշում մարդկության զարգացման առաջընթացը: Ժամանակակից հոգեբանների և մանկավարժների աշխատությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս,որ ստեղծագործական ընդունակությունները հայտնաբերվում են դեռևս վաղ տարիքում:Ակնհայտ է, որ կրթական բարեփոխումների գլխավոր արդյունքն այսօր պետք է լինի դպրոցն ավարտող երիտասարդի, ինչպես իր, այնպես էլ հասարակության բարեկեցության համար անձնական պատասխանատվություն կրելու կարողությունն ու պատրաստակամությունը: Դրա համար դպրոցի գործունեության ռազմավարությունը պետքէ ուղղված լինի զարգացնող կրթությանը, որի ընթացքում ուսուցչի և հոգեբանի ուշադրության կենտրոնը աշակերտի մտածողությունն ու ուսումնական գործունեությունն է, այլ ոչ միայն ուսուցանելու մեթոդներն ու տեխնոլոգիաները:Ներկայումս միջնակարգ և բարձրագույն դպրոցի խնդիրն է ոչ

միայն սովորողների կրթության բարձր մակարդակի ապահովումը,այլև նրանց մտածողության բազմակողմանի զարգացումը,իրենց գիտելիքներն ինքնուրույն լրացնելու և ժամանակակից տեղեկատվության օվկիանոսում կողմնորոշվելու ունակությունը:Ստեղծարարությունը արդի ժամանակաշրջանի թերևս կարևորագույն քննարկվելիք հասկացություններից է:Կ.Ռոջերսը համարում էր,որ այն արդիական է դառնում,եթե հաշվի ենք առնում այն հանգամանքը,որ միայն ստեղծագործական մոտեցումը թույլ կտա հարմարվել վիթխարի արագությամբ զարգացող աշխարհում:

Հետազոտության նպատակն է.

.Բացահայտել աշակերտների ստեղծագործական ունակությունները,

.Օգտագործելով դրանք՝ բարձրացնել սովորելու մոտիվացիան,

.Մեծացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը,

.Նպաստել սովորողի վերլուծական կարողությունների խթանմանը:

Խնդիրս հետևյալն է.

.Աշակերտների թույլ վերլուծական կարողությունները,

.Համագործակցային աշխատանքը միմյանց հետ:

Գրականության ակնարկ. Խնդրի վերլուծություն, լուծման ուղիներ

Հետազոտական հայ իրականության մեջ հայտնի մանկավարժ «Ստեղծարար մտածոզություն» գրքի հեղինակ Վաչագան Սարգսյանն է նշում. «Մարդու մեջզարգացնել ստեղծարար մտածողություն, նշանակում է նրան օժտել ստեղծագործելու որոշակի մեթոդիկայով, նրա մեջ ձեւավորել ու զարգացնել երեւույթները նորովի, անսովոր տեսանկյունից ներկայացնելու տեխնիկա, ոչ ստանդարտ իրավիճակներումկողմնորոշվելու, բազմազան հնարքներ բանեցնելու կարողությունները»:

Օրինակ արդի աշխարհի զարգացման միտումներից ելնելով հրեա հոգեբան և սոցիոլոգ Ա. Մասլոուն գտնում էր, որ պետք է մշակվի ուսուցման նոր տիպ՝ ուղղված նոր, գործունյա, ստեղծարար, ինքն իրեն վստահող, ազատ մարդու ստեղծմանը Ստեղծագործական ընդունակությունների զարգացման խնդիրը միշտ եղել է և կա արդիական խնդիր, որովհետև ստեղծագործող անհատները միշտ էլ պահանջարկ են վայելում և նրանք են որոշում մարդկության զարգացման առաջընթացը: Արդիհարափոփոխ աշխարհում՝տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների առկայության պայմաններում յուրաքանչյուրիս համար հրամայական է դարձել այդ զարգացումներին և փոփոխություններին համընթաց քայլելը,առաջ շարժվել՝ հաղթահարելով ծառացած խնդիրները:Այսօր պահանջված են ուրույն մտածողություն ունեցող ,ստեղծագործ մասնագետները,քանր որ միայն բավարար չէ միակ ճիշտ լուծումունեցող խնդիրներին արձագանքելը, անհրաժեշտ են այլընտրանքներ,նորարականլուծումներ: Մերօրյա ստեղծարար անձը պահանջված է հասարակության բոլոր ոլորտներում, ավելին՝ ժամանակակից կյանքի արագ փոփոխվող տեմպն ապահովում ենհենց ստեղծարար,ճկուն անձիք: Ինչպես նշել է պրոֆեսոր Ա. Մասլոուն, պետք է մշակվի ուսուցման նոր տիպ՝ուղղված նոր ,գործունյա,ստեղծարար,ազատ մարդուստեղծմանը:Անժխտելի է ,որ ստեղծարարությունը չափազանց արժեքավոր է մարդկանց նհասարակության համար:Թինա Սիլինգը այն սահմանում

է մեկ բառով՝հրահրող, Գրիշկևիչը այն սահմանում էր որպես նոր զգացումներ,որոնք օգտակար են, Նոլլերն այն համարում է գիտելիքի,երևակայության և գնահատման գործառույթ:Ըստ հոգեբանների՝ստեղծարար մտածողությունը մարդու հոգեբանական այնպիսի առանձնահատկություններն են,որոնցից կախված է գիտելիքների,կարողությունների, հմտությունների ձեռքբերումը: Յուրաքանչյուրիս ստեղծարարության դրսևորման համար անհրաժեշտ են հաղթահարել այնպիսի պատնեշներ,ինչպիսիք են ինքնաքննադատությունը,անհաջողության վախը, ծուլությունը, նախապաշարմունքները և այլն:Մ.Նելկեն առանձնացնում է ստեղծարարության հետևյալ արգելակները՝ապահովագրումը,պարգևատրումը, մրցակցությունը, կաղապարային մտածողությունը և այլն:

Ապահովագրումն այն է,

որ անձն իրեն սխալվելու հնարավորություն չի տալիս:

Պարգևատրում.

նա ,ով աշխատում է պարգևատրման համար,հազվադեպ է ստեղծարար այն պատճառով,որ ավելի շատ հետաքրքրված է իր պարգևատրմամբ,քան թե խնդիրը լուծելով: Մրցակցություն .այնտեղ ,որտեղ անհրաժեշտ է խրախուսել ստեղծարարությունը,այդտեղ մրցակցությունը կիրառելի չէ:

Ստեղծարարությունը նոր բան ստեղծելու գործողություն է: Սովորողներին՝որպես ապագա մասնագետների,ստեղծարարության զարգացումն այլ որակների հետ համադրությամբ ուսուցման գործընթացում հնարավորություն կընձեռնի լավագույնս հաղթահարել ժամանակակից աշխարհի մարտահրավերները:

Արդի հարափոփոխ աշխարհում՝ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների առկայության պայմաններում, երբ աշխատաշուկան լեփ-լեցուն է բազում նոր մասնագիտություններով, երիտասարդ կադրերով, յուրաքանչյուրիս համար հրամայական խնդիր է դարձել այդ զարգացումներին և փոփոխություններին համընթաց քայլելը, մեր ոլորտում

պահանջված, անփոխարինելի լինելը, առաջ շարժվելը՝ հաղթահարելով ծառացած խնդիրները և, իհարկե, արձանագրելով նոր ձեռքբերումներ։ Հարափոփոխ այս օրերում անհատ ստեղծագործական ունակությունների զարգացումը, նրա հնարավորությունների բացահայտումն ու ցայտուն դարձնելը էական են կյանքի բոլոր ոլորտներում, նրա գործունեության բոլորբնագավառներում: Բնականաբար, առաջին պլան են մղվում մարդու ունակությունները՝ նրա պատրաստակամությունը նոր փորձերին ու փորձություններին, ոչ ստանդարտ իրավիճակներում յուրօրինակ լուծումներ գտնելուն, իրողությունների նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքի դրսեւորմանը, առարկային, երեւույթին տարբեր կողմերից նայելու ունակությանը: Մարդու մեջ զարգացնել ստեղծարար մտածողություն, նշանակում է նրան օժտել ստեղծագործելու որոշակի մեթոդիկայով, նրա մեջ ձեւավորել ու զարգացնել երեւույթները նորովի, անսովոր տեսանկյունից ներկայացնելու տեխնիկա, ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու, բազմազան հնարքներ բանեցնելու կարողություններ:

Ստեղծարար մտածողությունը զարգացնել՝ նշանակում է մարդունօժտել ստեղծագործելու որոշակի մեթոդիկայով, նրա մեջ ձեւավորել ու զարգացնել երեւույթները նորովի, անսովոր տեսանկյունից ներկայացնելու տեխնիկա:

«Ստեղծարարության» թեմայով զբաղվող շատ հեղինակներ և փորձագետներ իրենց ուսումնասիրությունների համատեքստում փորձել են սահմանել ստեղծարարությունը:

Թինա Սիլինգը այն սահմանում է մեկ բառով՝ հրահրող, Գրիշկինիչը ստեղծարարությունը սահմանում էր որպես նոր զգացումներ, որոնք օգտակար են, Նոլլերն այն համարում է գիտելիքի, երևակայության և գնահատման գործառույթ: Ա. Գրեցովի մոտեցմամբ՝ ստեղծարարությունը ներառում է՝

• Ստեղծագործական գործունեության ինտելեկտուալ նախադրյալներ, որոնք թույլ ենտալիս ստեղծել նախկինում անհայտ, նոր բան:

• Գիտելիքների և կարողությունների նախնական համախումբ՝ նոր բան ստեղծելուհամար:

• Անձնային որակներ, որոնց շնորհիվ հնարավոր է արդյունավետ գործել անորոշության պայմաններում, դուրս գալ կանխատեսելիի սահմաններից, լինել ինքնաբուխ:

• Մետաստեղծագործություն, այսինքն՝ մարդու կենսական սկզբունք, որը ենթադրում է դատողություններում և գործողություններում ընդունվածից, կարծրատիպերից հրաժարում, նոր բան ստեղծելու և ընկալելու, իրեն և աշխարհը փոխելու ցանկություն, ազատության, ակտիվության և զարգացման արժեքորում:Ոմանք էլ «Ստեղծարարությունը» սահմանել են հետևյալ կերպ. Ստեղծարարությունը Թորենսը բնորոշում էր որպես գիտելիքներում թերությունների, բացթողումների, աններդաշնակության սուր ընկալում: Ջոյ Գիլֆորդը առանձնացնում էր ստեղծարար մտածողության չորս չափանիշ՝ սահունություն, ճկունություն, յուրօրինակություն և մշակվածություն:Ջոյ Գիլֆորդի մեկնաբանությամբ.

• Սահունությունը հնարավորինս շատ գաղափարներ ստեղծելու կարողությունն է:

• Ճկունությունը խնդիրները լուծելուց տարատեսակ ռազմավարություններ կիրառելուկարողությունն է:

• Յուրօրինակությունը ոչ սովորական, անսպասելի գաղափարներ առաջադրելուկարողությունն է:

• Մշակվածությունը՝ առաջացած մտքերը մանրամասնորեն մշակելու կարողությունը:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարող են ասել, որ ստեղծագործական մտածողությունը, կամ այլ կերպ ասած, կրեատիվությունը **/креативный «**անգլ**. to create** ստեղծել**,** արարել**/,** պարտադիր է յուրաքանչյուր այն մարդու համար**,** ով ստեղծում է իր սեփականարտադրանքը, այլ ոչ թե պատճենավորում է ուրիշինը՝ լինի դա ինտելեկտուալ, գիտական ստեղծագործությունը, աշխատությունը, թե արդյունաբերական գյուտերը: Մենք կկարողանանք արդյունավետ մտածել միայն այն ժամանակ, երբ մեր երևակայությունը սկսի անդադար ճամփորդել՝ պարբերաբար հանգեցնելով մեզ նոր գաղափարներ:

Հետազոտությունները ցույց են տվել, որ՝

Երբ դուք ինչ-որր բան կարդում եք՝

հիշումեք10%

Երբ դուք ինչ-որր բան լսում եք՝ հիշումեք 20%

Երբ ինչ-որ բան տեսնում եք հիշում եք 30%

Երբ դուք ինչ-որ բան տեսնում և լսում եք հիշում եք 50%

Երբ դուք ինչ-որ բան ինքնուրույն եք անում ՝ հիշում եք 90%-ը:

Ստեղծագործությունը կապված է խնդրի իրավիճակի լուծմանհետ, որը որոշում է ակտիվ մտավոր գործունեության սկիզբը, ուսանողների անկախությունը, որի արդյունքում նրանք հակասություն են հայտնաբերում իրենց իմացած իրավական, սոցիալական, տնտեսական բովանդակության և արագ կիրառման անկարողության միջև:

Գործնական համատեքստ

Աշակերտին սովորեցրու աշխատել, նրան ստիպիր ոչ միայն սիրել աշխատանքը, այլև այնքան նրան հարազատանալ, որպեսզի այն դառնա նրա երկրորդ բնավորությունը, սովորեցրու նրան այն բանին, որ նրա համար աներևակայելի լինի այլ կերպ, քան սեփական ուժերով որևէ բան յուրացնելը, որ նա ինքնուրույնաբար մտածի, որոնի, իրենդրսևորի, զարգացնի իր ննջող ուժերը, իրենից մշակի անսասան մարդու:

Ադոլֆ Դիստերվեգ

Հետազոտական աշխատանքի համար ընտրել եմ 11-րդ դասարանում <<Հայոց պատմություն>>առարկան՝հաշվի առնելով,որ այստեղ վերլուծական և ստեղծարար կարողությունները թույլ են զարգացած:Այստեղ սովորողները դժվարանում են հստակ վերլուծել պատճառն ու նշել հետևանքները:

Աշխատանքս կազմակերպելու համար ընտրել եմ հետևյալ դասի տիպերը՝

- Համակցված դաս,
- Նոր նյութի յուրացման դաս,
- Կարողությունների և հմտությունների ձևավորման դաս:

Մինչև աշխատանքիս անցնելը մանրամասն պլանավորել եմ յուրաքանչյուր դաս:Յուրաքանչյուր դասիս համար կազմել եմ դասապլան՝հաշվի առնելով դասարանի առանձնահատկությունները:Դասապլանում կարևորել եմ նպատակներն ու վերջնարդյունքները տրված թեմայի համար:

Նպատակներ.

- Նպաստել Հայաստանի սոցիալ-տնտեսական դրության վերաբերյալ գիտելիքների ձեռքբերմանը,
- Արևելյան և Արևմտյան Հայաստանի վիճակը տվյալ ժամանակաշրջանի կարևորփաստերն ու իրադարձությունները բացատրել,վերլուծել,
- Նպաստել աշակերտների մոտ 17-րդ դարավերջին և 18-րդ դարում հայ ժողովրդի ազատագրական պայքարի աշխուժացման նախադրյալների և ընթացքի մասին գիտելիքների ձեռքբերմանը
- Տվյալ ժամանակաշրջանի կարևոր փաստերն ու իրադարձություններրբացատրել,վերլուծել:

  Վերջնարդյունքներ.
- Բնութագրել Արևելյան և Արևմտրան Հայաստանի սոցիալ-տնտեսական ընդհանուրվիճակը,
- բացատրել ազատագրական պայքարի աշխուժացման նախադրյալները XVII դարավերջին, պայքարի հիմնական արդյունքները:
- բացատրել Հայաստանի ազատագրության խնդրում եվրոպական պետությունների հետ կապված հույսերի ձախողման պատճառները
- վերլուծել և արժևորել դարաշրջանի ազատագրական պայքարի կարևորագույն դրվագները և գործիչների գործունեությունը:

Օրվա դասի պլանը կառուցել եմ ԽԻԿ համակարգով:ԽԻԿ-ը ժամանակակից մեթոդների ուսուցման համակարգ է,որը ուսուցման գործընթացը բաժանում է հետևյալ փուլերի.

- Խթանում
- Իմաստի ընկալում
- Կշռադատում

Բնութագրելով յուրաքանչյուր փուլում ուսուցչի անելիքները՝ ԽԻԿ-ը նաև առաջ է քաշում մի շարք մեթոդներ՝տվյալ փուլին անհրաժեշտ արդյունքին հասնելու

համար:

Խթանման փուլի հիմնական նպատակներից է նոր նյութի վերաբերյալ բացահայտել սովորողների գիտելիքները,քննարկվելիք նյութի մեջ ներգրավելով ակտիվացնել աշակերտներին,աշակերտների մոտ ձևավորել գիտելիներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում:

Խթանման փուլի համար նպատակահարմար է կիրառել հետևյալ մեթոդները՝ մտագրոհ,խմբավորում,պրիզմա,մտածիր զույգ կազմիր-քննարկիր,ձնագնդի և այլն:

Իմաստի ընկալման փուլի նպատակներից են սովորողների մոտ հետաքրքրության աճի պահպանումը, տեղեկատվության ընկալման ինքնավերահսկման ապահովումը,նոր և հին տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը:

Իմաստի ընկալման փուլում նպատակահարմար է կիրառել T-աձև աղյուսակը, Վենի դիագրամը, խճանկարը, փոխգործուն նշանների համակարգը, խորանարդումը և այլն: Կշռադատման փուլի նպատակներից են սովորողի նոր ստացած տեղեկատվության արտահայտումը սեփական բառերով և ձևակերպումներով, նոր գիտելիքների միաձուլումն արդեն ունեցածին,դրանց աստիճանական ինտեգրացումը: Այս փուլում կարող ենք կիրառել խորանարդում, քառաբաժան և այլ մեթոդներ:

Հետազոտական աշխատանքիս համար առանձնացրել և կիրառել եմ հետևյալ մեթոդները. Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ-նպատակը,որ սովորողները կարողանան իրար հետ համագործակցելով սովորել,փոխանակել կարծիքներ,քաջալերել միմյանց, Մտագրոհ-քանի որ խթանում է ստեղծագործական մտածողությունը, միտքը միտք է ծնում, հեշտ է հասկանալ և կիրառել, դասի մասնակցային սկիզբ ապահովող լավագույն մեթոդներից է, Կիսատ նախադասություն-կիսատ նախադասությունների լրացումն օգնում է աշակերտներին ամփոփել դասը: Իր ընտրությամբ, ուսուցիչը կարող է տալ կիսատ նախադասություններից մի քանիսը՝ աշակերտներին հնարավորություն ընձեռելով ընտրելիրենց ցանկությամբ այն կիսատ նախադասությունները, որոնք կուզենան ավարտել:

<<Խաթարված հերթականություն>>-այս վարժությունը կնպաստի գիտելիքների և կարողությունների զարգացմանը:

Հինգրոպեանոց ազատ շարադրանք-համագործակցային ուսուցման մեթոդ, որը կարող ենք կիրառել ելնելով դասի նպատակից՝ խթանման կամ կշռադատման փուլում:

3-2-1 հնարը-արդյունավետ է կշռադատման փուլում,

ԳՈՒՍ /գիտեմ,ուզում եմ իմանալ,սովորեցի/-դասը սկսելու հայտնի հնար:

Դասապլանում ինչպես նշեցի կարևորել եմ նպատակներն ու վերջնարդյունքները: Վերջնարդյունքներն այն ակնկալիքներն են,որոնք պետք է ստանամ թեմայի վերջում:

Հետազոտության ընթացքը, տվյալների մշակում և վերլուծություն

Ինչպես նշվեց <<Գործնական համատեքստ>>բաժնում հետազոտական աշխատանքի համար ընտրել եմ 11-րդ դասարանում <<Հայոց պատմություն>>առարկան,որտեղ այս ընթացքում ուսումնասիրելու ենք << **Ազատագրական շարժումները 17-րդ դարի երկրորդ կեսին և 18-րդ դարում**>>թեմաները/ /:

11-րդ դասարանում չկան ներառված աշակերտներ,ուստի աշխատանքս կազմակերպել եմ հաշվի առնելով այդ հանգամանքը:
Մինչև ուսումնասիրվող թեմայով դասի անցկացումը,երեխաներին տվել եմ գիտելիքների ստուգման թեստ, որն ինձ օգնեց բացահայտելու, թե աշակերտները որքանով էին հիշում տվյալ թեման, քանի որ նրանք միջին դպրոցում նրանք արդեն իսկ ուսումնասիրել են այս թեմաները:

Նոր նյութի յուրացման ժամանակ ուսուցիչը պետք է իրականացնի հետևյալ քայլերը՝ուսուցանվող նյութն անցնելիս պետք է հաշվի առնել աշակերտների մտային ակտիվության ժամանակ ճանաչողության գործընթացի օրինաչափությունները, մատնանշի ուսուցանվող նյութի առավել կարևոր հատվածները, ձևավորի հիշելու և հիշողության մեջ պահելու մոտիվացիա, զարգացնի մտապահման տեխնիկան:
Օրվա դասի պլանը կազմել եմ ԽԻԿ համակարգով: Առանձնացրել եմ թեմայի վերաբերյալ հետևյալ հարցերը

- Ո՞ր երկրների հետ էր կապում իր հույսը հայ ժողովուրդը թուրք-պարսկական լծից ազատագրվելու համար:
- Նշեք նշանավոր գործիչների անուններ, ովքեր գործնական քայլեր ձեռնարկեցին պայքարը կազմակերպելու համար:
- Ե՞րբ և ու՞մ ջանքերով են հրավիրվել՝ Էջմիածնի և Անգեղակոթի ժողովները:
- Ինչու՞ չիրականացան Պֆալցյան և Մոսկովյան ծրագրերը:
- Ինչպե՞ս կգնահատեք Իսրայել Օրու գործունեությունը

- Վերջնարդյունքներ.

- Բացատրել, որ Պֆալցյան ծրագիրը չիրականացավ, քանի որ Եվրոպական երկրները չհամաձայնվեցին օգնել Հայաստանի ազատագրության ծրագրին, իսկ Մոսկովյան ծրագիրը չիրականացավ, քանի որ Ռուսաստանն իր այլ պատերազմներով զբաղված լինելով՝ չկարողացավ գործնական օգնություն ցույց տալ հայ ժողովրդին:
- Գնահատել Իսրայել Օրու գործունեության նշանակությունը, որպես ազատագրական պայքարի կազմակերպիչ, քանի որ նա Հայաստանի ազատագրության ծրագրերը դրեց գործնական հողի վրա և կազմեց Հայաստանի ազատագրության առաջին ծրագրերը:

Խթանման փուլում մտագրոհով փորձեցի ի մի բերել այն գիտելիքները, որոնք աշակերտները ունեին Հայաստանի դրության մասին:

Իմաստի ընկալման փուլում նոր նյութը հաղորդեցի կարճ դասախոսության մեթոդով, այնուհետև հանձնարարվեց ինքնուրույն կարդալ թեման:

Կշռադատման փուլում ավանդական հարցաշարի միջոցով պարզեցինք աշակերտների յուրացման աստիճանը:

Դասագրքից սովորելով իրենց հանձնարարված հատվածները, դիտեցին նաև սահիկաշար թեմայի վերաբերյալ և ներկայացրին:

Կիրառեցի << 3 2 1>>հնարը: Նախօրոք առանձնացված թղթեր բաժանեցի և հանձնարարեցի վրան գրել 3 բան, որ սովորեցին, 2 բան, որ հեշտ էր և 1 բան, որը դժվար էր:

<<Դ Ա Ս Ի Պ Լ Ա Ն>>

Դասարան՝ 11-րդ

Առարկա՝ Հայոց պատմություն

Դասի թեման՝ Ազատագրական պայքարի նոր փուլը

Նպատակը՝

1. Ուսումնասիրել նյութը, շարունակել աշխատանքը պատմական մտածողության վերաբերյալ

2. Նպաստել 17-րդ դարավերջին և 18-րդ դարում հայ ժողովրդի ազատագրական պայքարի աշխուժացման նախադրյալների և ընթացքի մասին գիտելիքների ձեռքբերմանը

3. Գնահատել Իսրայել օրու գործունեությունը

Վերջնարդյունքներ

Կարողանա

. բացատրել ազատագրական պայքարի աշխուժացման նախադրյալները XVII դարավերջին,

. բացատրել Հայաստանի ազատագրության խնդրում եվրոպական պետությունների հետ կապված հույսերի ձախողման պատճառները

. վերլուծել և արժևորել ազատագրական պայքարի գործում Իսրայել օրու դերը

Դասի տիպը՝ համակցված

Անհրաժեշտ պարագաներ, նյութեր՝ դասագիրք, տետր, քարտեզ, նկարներ, սահիկաշար

Մեթոդներ՝ խմբային, խոսքային, մտագրոհ, հարց ու պատասխան, ԽԻԿ համակարգ

Դասի ընթացքը

Սկիզբը – պատմական համատեքստ



Կատարվում է անդրադարձ նախորդ դասի վերաբերյալ:

Իմաստի ընկալման փուլ:

Դասարանը բաժանվում է խմբերի

- Առաջին խումբը վերլուծում է

Հայ ժողովուրդը ազատագրության հույսը կապում էր Լեհաստանի, Ֆրանսիայի, Սրբազան Հռոմեական կայսրության, Ռուսաստանի, իտալական քաղաքների և պապականության հետ: (5-7 րոպե):

- Երկրորդ և երրորդ խմբերը հաջորդաբար վերլուծում են

Հայաստանի ազատագրությամբ այս ժամանակաշրջանում ակտիվորեն զբաղվել են հետևյալ նշանավոր գործիչները՝ Արիստակես կաթողիկոս, Հովհաննես Թութունջի, Մահտեսի Շահմուրատ, Խաչատուր Գաղատացի, Հակոբ Ջուղայեցի, Իսրայել Օրի:

Էջմիածնի ժողովը տեղի է ունեցել Հակոբ Ջուղայեցու, իսկ Անգեղակոթի ժողովը՝ Իսրայել Օրու նախաձեռնությամբ: (8-10 րոպե)

- Չորրորդ խումբը վերլուծում է և գնահատում է խմբերի աշխատանքը 5 րոպե

Կշռադատման փուլ

- Ուսուցչի օգնությամբ կազմակերպվում է հարց ու պատասխան,

1. Ո՞ր երկրների հետ էր կապում իր հույսը հայ ժողովուրդը թուրք-պարսկական լծից ազատագրվելու համար:
2. Նշեք նշանավոր գործիչների անուններ, ովքեր գործնական քայլեր ձեռնարկեցին պայքարը կազմակերպելու համար:
3. Ե՞րբ և ու՞մ ջանքերով են հրավիրվել՝ Էջմիածնի և Անգեղակոթի ժողովները:
4. Ինչու՞ չիրականացան Պֆալցյան և Մոսկովյան ծրագրերը:
5. Ինչպե՞ս կգնահատեք Իսրայել Օրու գործունեությունը:

Լրացվում է աղյուսակներ.

	Գործիչ		Պաշտոն
	Մինաս Վարդապետ	1	Պարսկաստանում Ռուսաստանի դեսպան
	Իսրայել Օրի	2	հայոց կաթողիկոս
	Հակոբ Ջուղայեցի	3	թարգմանիչ

	Ժողով		Տարեթիվ
	Անգեղակոթի ժողով	1	
	Էջմիածնի ժողով	2	

. Բացատրել, որ Պֆալցյան ծրագիրը չիրականացավ, քանի որ Եվրոպական երկրները չհամաձայնվեցին օգնել Հայաստանի ազատագրության ծրագրին, իսկ Մոսկովյան ծրագիրը

չիրականացավ, քանի որ Ռուսաստանն իր այլ պատերազմներով զբաղված լինելով ՝ չկարողացավ գործնական օգնություն ցույց տալ հայ ժողովրդին:

. Գնահատել Իսրայել Օրու գործունեության նշանակությունը, որպես ազատագրական պայքարի կազմակերպիչ, քանի որ նա Հայաստանի ազատագրության ծրագրերը դրեց գործնական հողի վրա և կազմեց Հայաստանի ազատագրության առաջին ծրագրերը: (8-10 բոպե)

- **Ամփոփման** ընթացքում կատարվում է անդրադարձ և գնահատում (2-3 բոպե)
- **Տնային աշխատանք՝** հանձնարարվում է սովորել համապատասխան պարագրաֆը և գրել տվյալ ժամանակաշրջանի հայ ազատագրական շարժման որևէ գործչի մասին (2-3 բոպե):

Եզրակացություն

Ժամանակակից դպրոցի պայմաններում գրեթե բոլոր ուսուցիչները, թեկուզ և ոչ հաճախակի, իրենց գործունեության ընթացքում օգտագործում են ուսուցման ոչ ավանդական ձևեր: Դա կապված է ուսուցչի մտածողության նոր ուժի կայացման հետ և ուղղված է առարկային հատկացված սահմանափակ ժամերի շրջանակում ուսումնադաստիարակչական խնդիրների արդյունավետ լուծմանը, աշակերտների ինքնուրույն ստեղծագործական-որոնողական գործունեության խրախուսմանը:

Այսօր ուսուցիչն առավելապես գործ ունի այնպիսի աշակերտների հետ, որոնք իրենց օրվա մեծ մասն անցկացնում են ոչ թե գիրք կարդալով, այլ համակարգչի մոտ, ընդ որում, որպես ակտիվ խաղացողներ:Նոր կրթակարգի հիմնական առանձնահատկություններից է յուրաքանչյուր աշակերտի եզակիության, ինքնատիպության և պահանջմունքների կարևորումը: Ուստի զարգացման առաջնահերթ խնդիրների լուծմանը ծառայող դպրոցի կրթակարգը պետք է լինի պարտավորեցնող, ինտեգրող և հետազոտության մղող:Երիտասարդ մասնագետ պատրաստելու հիմնական նպատակն այն է, որ աշակերտը դպրոցն ավարտելուց հետո ձեռք բերի իր ոլորտի մասնագիտական խնդիրներն ինքնուրույն լուծելու կարողություն և հմտություն:

Դա նշանակում է, որ յուրաքանչյուր ուսուցչի ուսուցման կարևորագույն խնդիրն է ուսուցման առաջին օրվանից կազմակերպել աշակերտի ինքնուրույն մտածողության զարգացումը, առաջադրված հարցադրումների պատասխանների որոնման կարողությունների ձևավորումը։Մարդկային մտածողությունը, մտավոր խնդիրների լուծումը ընթանում է երկու հիմնական փուլերով՝ հետազոտվող խնդրի վերլուծությամբ և խնդրի լուծման գաղափարի համադրությամբ։ Հաստատված կարծիք է, որ աշակերտները առավել արդյունավետ են սովորում օրինակների օգնությամբ։ Այստեղից պետք է եզրակացնել, որ աշակերտների ինքնուրույն մտածողության զարգացման նպատակից ելնելով ուսուցման ամբողջ գործընթացը պետք է վերածել հարցերի և խնդիրների վերլուծություններ կատարելու վարժանքների։

Այդ նպատակին հասնելու առավել արդյունավետ եղանակն այն է, որ բոլոր ուսուցիչները իրենց դասը հաղորդեն պրոբլեմային եղանակով, պետք է հասնել նրան, որպեսզի յուրաքանչյուր աշակերտի ներկայացվի գիտական խնդիրների լուծման տիպօրինակներ՝ որոնց հետևելով աշակերտը կկարողանա կազմակերպել խնդիրների ինքնուրույն լուծման սեփական փորձը։Անձի զարգացման գործում ստեղծարարության զարգացումը ապահովվում է նրա ինքնուրույնության հաստատմանը։



Հետազոտական աշխատանքիս նպատակն էր վեր հանել աշակերտների ստեղծարար կարողությունները, վերլուծական կարողությունները: Եթե ավանդական ուսուցման ժամանակ երեխաները պասիվ սովորողներ են հանդիսանում, տարբեր մեթոդների կիրառման արդյունքում նրանք կարող են դառնալ դասապրոցեսի ակտիվ մասնակիցներ: Իհարկե չեմ փաստի, որ ամբողջությամբ հասա իմ առջև դրված վերջնարդյունքներին, բայց, այնուամենայնիվ, որոշակի առաջընթաց կարող եմ արձանագրել: Ինչպես հայտնի աֆորիզմն է ասում. <<Մի վախեցեք դանդաղ շարժվելուց, վախեցեք անընդհատ նույն տեղում մնալուց>>:

Անվիճելի է այն փաստը,որ ստեղծագործական ունակություններով օժտված է յուրաքանչյուր անձ:Անհրաժեշտ է միայն հայտնաբերել այդ ունակությունները:

Ավարտելով այս բովանդակալից և հրաշալի հետազոտությունը, պետք է փաստեմ, որ ինձ համար իբրև բոլոր կարողություններից լավագույնը ստեղծարարությունն է, բնույթ՝ որով նկարագրում ենք նաև մեր Արարիչ Աստծուն: Անչափելի համարվող ստեղծարարության կարողությունը համեմատելի է մարդկային հոգու անսահմանության հետ…

Բաց թողնելով թեմայի հետ կապվա այս խոհափիլիսոփայական մոտեցումը, և վերադառնալով բուն կոնտեքստին, չեմ կարող չանդրադառնալ, այս վերապատրաստման դասընթացների ժամանակ ինձ համար բացահայտված Բենջամեն Բլումի տաքսոնոմիային: Այստեղ ևս ստեղծելու կարողությունը դիտվում է ամենաբարձր հատկանիշը:

Ամփոփելով թեման նշեմ, որ իբրև ուսուցիչ և պարզապես հայ մարդ, կարծում եմ, որ ստեղծարարության կարողությունը պետք է դրվի միայն ու միայն լավագույն արժեքների կողքին՝ բարի ու ստեղծարար, ձգտող և ստեղծարար, ինքնաճանաչ և ստեղծարար, և ի վերջո ՀԱՅ և ստեղծարար, արժեքների համադրումը կբերի մեր երկրում նոր որակների ձևավորմանն ու զարգացմանը:

Գրականություն

1 Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ս. Ս., Մանկավարժություն, Եր. 2005թ.

2 Նալչաջյան Ա., Հոգեբանական բացատրական բառարան, Երեվան 1984թ.

3 Թոփուզյան Ա., Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրներըմանկավարժության մեջ, Երևան 2009թ.

4 Թ. Թովմասյան, Ա.Այվազյան <<Մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար>>Երևան 2019թ.,

5 https://www.bibar.am

6 https://Forum.armedu.am